

Էրիկ Արզումանյան

Բանալի բառեր՝ շորթում, շորթման առարկա, շորթման օբյեկտիվ կողմ, պահանջ, սպառնալիք, հարկադրանք, բռնություն, ազատ կամահայտնություն:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է շորթման հասկացությունը, որի համաձայն՝ շորթումը անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի, նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջն է:

Վերոհիշյալ հասկացության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ շորթման օբյեկտիվ կողմը դրսևորվում է հանցավորի կողմից տուժողին պահանջ ներկայացնելով՝ հանձնել իրեն գույք կամ գույքի նկատմամբ իրավունք կամ իր օգտին կատարել գույքային բնույթի այլ գործողություններ: Ընդ որում, այդ պահանջը պետք է ամրապնդվի սպառնալիքով, որի տեսակները հստակ կանխորոշված են քննարկվող հոդվածով: Դրանք են՝ անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ նրանց իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, անձի կամ նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքները:

Մասնագիտական գրականության մեջ համակողմանի քննարկման առարկա են դարձվել շորթման հանցակազմի օբյեկտիվ կողմը, ինչպես նաև առարկային վերաբերող մի շարք խնդրահարույց հարցեր, որոնցից մի քանիսին հարկ ենք համարում անդրադարձնալ նաև սույն հոդվածում:

Շորթման հանցակազմի առարկա են, ինչպես հետևում է վերոհիշյալ հոդվածից, գույքը, գույքի նկատմամբ իրավունքը, գույքային բնույթի այլ գործողությունները:

Մի շարք հեղինակներ գտնում են, որ շորթման առարկայի նման ձևակերպումը, մասնավորապես՝ դրա բաժանումն ու առանձին տեսակներով ներկայացումը, այնքան էլ նպատակահարմար չէ:

Ինչպես գիտենք, գույք է համարվում նյութական աշխարհի այն իրը (առարկան), որում նյութականացվել է մարդկային աշխատանքը, և որը հանդես է գալիս շարժական կամ անշարժ գույքի ձևով և ունի դրամական գնահատման արժեք[1]:

Հանցակազմի դիսպոզիցիայում հատուկ նշվում է շորթման առարկա հանդիսացող գույքի իրավաբանական յուրահատկությունը. այն է՝ շորթողի համար գույքը պետք է լինի ուրիշինը, չգտնվի իր տնօրինության կամ պահպանության տակ: Այս հանգամանքը, իհարկե, չի նշանակում, որ հանցավորի կողմից պահանջները կարող են ներկայացվել միայն գույքի սեփականատիրոջը:

* Հոդվածն ընդունվել է 30.01.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Առաքելյանը:

Որոշ հեղինակների կարծիքով՝ «գույք» հասկացությունն իր մեջ ընգրկում է գույքի նկատմամբ իրավունք հասկացությունը, ուստի այս երկու հասկացությունների առանձնացումը գուրկ է տրամաբանական որևէ հիմքից [2]: Վ. Ն. Սաֆոնովի կարծիքով՝ շորթման առարկա հանդիսացող գույքի նկատմամբ իրավունքի խորը ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ այն իրենից ներկայացնում է գույք կամ գույքային բնույթի գործողություն[3]:

Այնուամենայնիվ, որոշ հեղինակներ այն կարծիքին են, որ գույքի նկատմամբ իրավունքի՝ որպես շորթման առանձին առարկայի նախատեսումը արդարացված է, քանի որ «գույքային իրավունք» և «գույք» հասկացությունները նույնական չեն այն պատճառով, որ գույքային իրավունքը կոչված է սահմանելու գույքի իրավական կարգավիճակը՝ հիմնականում հանդես գալով փաստաթղթի տեսքով և ամենևին չի ներառվում գույք հասկացության մեջ:

Ինչ վերաբերում է գույքային բնույթի այլ գործողությանը, ապա դրա տակ հարկ է հասկանալ տուժողի այն գործողությունը, որը պայմաններ է ստեղծում կամ խոչընդոտներ է վերացնում շորթողի անօրինական հարստացման համար: Գործողությունները կարող են տարաբնույթ լինել՝ ծառայությունների անհատույց մատուցում, բարձր վարձատրվող պաշտոնի նշանակում՝ առանց համապատասխան իրավական հիմքի և այլն[4]:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը, «գույքային բնույթի այլ գործողություն»-ը նախատեսելով որպես շորթման առարկա, փաստորեն, գույքի կամ գույքային իրավունքի հանձնումը դիտարկել է որպես գույքային բնույթի գործողություն, որպիսի պարագայում կարծես թե վերջինների առանձին նախատեսումը իմաստագրվել է:

Այսպիսով՝ բազմաթիվ են կարծիքները, որ շորթման առարկայի տարբեր տեսակների սահմանում և առանձնացումը միայն խնդիրներ է առաջացնում իրավակիրառողի համար, քանի որ վերջինս ստիպված է նշելու, թե յուրաքանչյուր դեպքում ունեցողությունը կոնկրետ որ առարկայի դեմ է ուղղված, այսինքն՝ առարկայի մի տեսակը հստակորեն տարբերակել մյուսից այն պարագայում, երբ դրանց տարբերությունը որևէ կերպ չի անդրադառնում ինչպես արարքի հանրային վտանգավորության աստիճանի, այնպես էլ դրա քրեաիրավական որակման վրա:

Որպես խնդրի լուծման հնարավոր տարբերակ՝ առաջարկվում է շորթման հանցակազմի առարկան սահմանել մեկ ընդհանուր հասկացությամբ: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տուժողի կողմից գույքի կամ գույքային իրավունքի հանձնումը կամ գույքային բնույթի այլ գործողության կատարումը հանցավորի համար ոչ այլ ինչ է, քան գույքային բնույթի օգուտ, և հանցավորի արարքը միտված է հենց գույքային բնույթի օգուտ ստանալուն՝ առաջարկվում է շորթման առարկան սահմանել որպես «գույքային բնույթի օգուտ», ինչը հնարավորություն կտա խուսափելու վերը նշված խնդիրներից: Քննարկվող հնարավոր տարբերակներից մեկն էլ «գույքային բնույթի գործողություն» հասկացության նախատեսումն է, որը, ինչպես նշվեց, իր մեջ ներառում է նաև գույքի և գույքային իրավունքի հանձնումը:

Հարկ է նշել սակայն, որ այդ դեպքում, ինչպես և այժմ, քննարկվող հանցակազմի կարգավորման տիրույթից դուրս կմնան այն դեպքերը, երբ հանցավորը տուժողից պահանջում է ձեռնպահ մնալ իր գույքային իրավունքների իրացումից (օրինակ՝ ժառանգության ստացման համար օրենքով սահմանված ժամկետում դիմում ներկայացնելուց կամ փոխառության գումարը հետ պահանջելուց)՝ իր այդ պահանջը զուգորդելով սպառնալիքով: Մինչդեռ, ակներև է, որ նշված դեպքերում հանցավորի արարքը շորթման հանցակազմով որակվել չի կարող, քանի որ ինչպես ներկայումս, այնպես էլ

առաջարկվող փոփոխության պայմաններում հանցավորի՝ տուժողին ուղղված որոշակի գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու պահանջը հանցակազմի առարկա չի հանդիսանում: Ուստի, կարծում ենք, որ հանցակազմի դիսպոզիցիան պետք է կառուցվի այնպես, որ իր մեջ ներառի նաև վերը քննարկված իրավիճակները: Մասնավորապես, գտնում ենք, որ շորթման պահանջը քննարկվող հոդվածում պետք է ձևակերպվի հետևյալ կերպ. «(...) գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի իրավունքների իրացումից ձեռնպահ մնալու պահանջը»:

Անդրադառնալով շորթման օբյեկտիվ կողմին՝ պետք է արձանագրել, որ տեսական գրականության մեջ այն բնութագրվում է որպես երկու՝ միմյանցից տարբեր գործողությունների համակցություն:

Ըստ Լ. Դ. Գաուխմանի և Ս. Վ. Մաքսիմովի՝ շորթումը օբյեկտիվ կողմից միշտ արտահայտվում է երկու՝ բովանդակությամբ, էությամբ և ուղղվածությամբ միմյանցից տարբեր գործողություններով[5]: Պահանջներն ուղղված են հանցակազմի անմիջական օբյեկտի դեմ, իսկ սպառնալիքները՝ լրացուցիչ օբյեկտի: Վերջիններս կոչված են ապահովելու հիմնական օբյեկտի դեմ ուղղված ոտնձգության իրականացումը[6]:

Պրոֆեսոր Նեգամովայի կարծիքով՝ շորթումը օբյեկտիվ կողմից իրենից ներկայացնում է բարդ, բազմատարր հանցագործություն՝ գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, գույքային բնույթի գործողության կատարման պահանջ՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ հոգեբանական բռնության գրծադրում[7]:

Ս. Մ. Կոչոյին գտնում է, որ շորթման օբյեկտիվ կողմի բնութագրական հատկանիշը միայն պահանջն է՝ հանձնել գույք կամ գույքի նկատմամբ իրավունք կամ կատարել գույքային բնույթի այլ գործողություններ[8], իսկ Լ. Ա. Պրոխորովը և Ս.Լ. Պրոխորովան ընդգծում են, որ շորթման օբյեկտիվ կողմը հանցավորի կողմից տուժողին գույք, գույքի նկատմամբ իրավունք իրեն հանձնելու կամ գույքային բնույթի գործողություն կատարելու պահանջի մեջ է, որը գուգորդվում է որոշակի բովանդակությամբ սպառնալիքով[9]:

Շորթման օբյեկտիվ կողմի վերը նշված մեկնաբանությունների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հանգելու հետևյալ եզրակացությանը՝ իհարկե, որոշակի տարակարծություններով, այնուամենայնիվ, այս բոլոր բնորոշումները համախմբվում են այն հանգամանքի շուրջ, որ շորթման հասկացության մեջ ելակետային նշանակություն ունի «պահանջ» եզրույթը՝ չնայած այն հանգամանքին, որ որոշ հեղինակներ այդ պահանջը (հանձնել գույք, կամ գույքային իրավունք կամ կատարել գույքային բնույթի այլ գործողություն) դիտարկում են այլ գործողությունների հետ միասնության մեջ (տարատեսակ սպառնալիքներ)՝ տալով դրանց հավասարաթեք նշանակություն, իսկ հեղինակների մյուս մասը գտնում է, որ հենց և բացառապես պահանջի մեջ է շորթման էությունը (ինչպես, օրինակ, ավագակության դեպքում հարձակումը):

Պահանջը տեսական գրականության մեջ բնորոշվում է որպես վճռական, կտրուկ կերպով տրված հրահանգ, վերջնագիր: Մասնավորապես՝ Յու. Ի. Շևցովը պահանջը բնորոշում է որպես հանցավորի վճռական, իմպերատիվ կերպով արված կոչ իրեն գույք կամ գույքի նկատմամբ իրավունք հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու մասին[10]:

Իրականում, սակայն, հնարավոր են դեպքեր, երբ գույքային պահանջները կտրուկ և իմպերատիվ կերպով չհնչեն: Քողարկված այդ պահանջները կարող են դրսևորվել բարեկիրթ խնդրանքի, ակնարկի, գործնական առաջարկի տեսքով: Ուստի ակներև է, որ շորթման իրականացումը հնարավոր է նաև նշված եղանակներով, սակայն նման դեպքերը չեն կարող որակվել շորթման հանցակազմով: Այսինքն՝ պահանջի՝ որպես շորթման հանցակազմի պարտադիր հատկանիշի սահմանումը էապես նեղացնում

է հանցակազմի օբյեկտիվ կողմը, որպիսի հանգամանքը տեսական գրականության մեջ դարձել է համընդգրկուն քննարկման առարկա:

Այս կապակցությամբ Վ.Վ.Վելյենկոն արդարացիորեն նշել է, որ շորթումը, բնորոշելով որպես ուրիշի գույքը հանձնելու պահանջ, օրենսդիրն անհիմն նեղացրել է դրա օբյեկտիվ կողմը, քանի որ պահանջը ենթադրում է վճռական հայտարարություն, հրաման, վերջնագիր[11]: Դրա հետ կապված իրավակիրառ պրակտիկայում երբեմն ոչ միանշանակ են լուծվում այն դեպքերը, երբ անձի գործողությունները անմիջականորեն գույք կամ գույքային իրավունք հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություն կատարելու պահանջներ չեն պարունակում, կամ օրինակ՝ սպառնալիքը առկա չէ, սակայն դրա թաքնված գոյությունը պայմանավորված է պահանջին նախորդող իրադրությամբ (օրինակ՝ չվճարման համար նախկինում ենթարկվել է բռնության):

Ինչ վերաբերում է հանցավորի՝ անօրինական պահանջի ամրապնդմանն ուղղված սպառնալիքին, ապա հարկ է նկատել, որ դրա տեսակների սպառնալիք վարկումը ևս խնդրահարույց է: Ինչպես նշվեց, միայն անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ նրանց իրավունքներին ու օրինական շահերին նշանակալից սպառնալիք տեղեկություններ հրապարակելու, անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, անձի կամ նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի դեպքում է, որ անձի արարքը, իհարկե, հանցակազմի մյուս հատկանիշների առկայության պայմաններում, կարող է որակվել շորթման հանցակազմով:

Անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող տեղեկություն են համարվում այն տեղեկությունները, որոնց հրապարակումը կարող է նվաստացնել անձի պատիվն ու արժանապատվությունը: Տեղեկությունը կարող է լինել սուտ (չհամապատասխանել իրականությանը) կամ իրականությանը համապատասխանող, սակայն բոլոր դեպքերում վարկաբեկող (հանցագործության մեղսագրում, հիվանդություն, հոգեկան կամ ֆիզիկական արատ ունենալու մասին տեղեկություն և այլն):

Ինչ վերաբերում է անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին նշանակալից սպառնալիքին, ապա կարծում ենք, որ տակ պետք է հասկանալ այնպիսի տեղեկությունը, որն անձը չի ցանկանում հայտնի դարձնել երրորդ անձանց և որի բացահայտումը կարող է իրեն նշանակալից վնասել:

Հարց է առաջանում, թե արդյո՞ք շորթումն ավարտված համարելու համար տեղեկատվության հայտարարմամբ տուժողին հասցվելիք վնասը պետք է նշանակալից լինի և՛ տուժողի, և՛ հանցավորի համար, և ինչպե՞ս վարվել այն դեպքերում, երբ հանցավորը սխալվում է տեղեկության հրապարակմամբ հասցվելիք վնասի տուժողի համար նշանակալից լինելու հարցում, և արդյո՞ք այս դեպքում գործ ունենք շորթման փորձի հետ, կամ արդյո՞ք հնարավոր է գնահատել դեռևս չհրապարակված տեղեկության ապագայում հասցնելիք վնասի նշանակալից կամ ոչ նշանակալից լինելը:

Կարծում ենք, որ նշանակալից վնասի և առհասարակ դեռևս չհասցված վնասի գնահատումը սույն պարագայում գրեթե անհնարին է՝ պայմանավորված հանցակազմի ձևական լինելով: Ուստի, գտնում ենք, որ առավել նպատակահարմար է քննարկվող հոդվածում անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին նշանակալից սպառնալիք տեղեկություններ հրապարակելու սպառնալիքի փոխարեն նախատեսել տեղեկությունների հրապարակման սպառնալիքը, որն ուղղված է անձին կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին վնաս պատճառելուն:

Անդրադառնալով բռնության գործադրման սպառնալիքին՝ առաջին հերթին հարկ է նշել, որ բռնության օրենսդրական ձևակերպումը բացակայում է, գրականության մեջ

այն բնութագրվում է որպես ֆիզիկական հարկադրանք, որը կարող է արտահայտվել ֆիզիկական բռնության ցանկացած եղանակով՝ ծեծ, մարմնական վնասվածք կամ առողջությանը այլ վնաս հասցնել և այլն: Որոշ աղբյուրներում բռնություն հասկացությունն իր մեջ ներառում է նաև հոգեկան հարկադրանքի գործադրումը^[12]: Այս առումով հետաքրքրական է հարցի կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը: Իր՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը բռնությունը բնորոշել է որպես դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք:

Ինչ վերաբերում է գույքի ոչնչացման կամ վնասման սպառնալիքին, ապա այն պետք է լինի իրական, իսկ գույքը պետք է համարվի տվյալ անձինը (ում տրվում է սպառնալիքը) կամ նրա մերժավորինը՝ անկախ նրանից՝ որտեղ և ում մոտ է գտնվում այդ գույքը:

Վերը նշված բոլոր դեպքերում սպառնալիքը կարող է տրվել տարբեր ձևերով՝ բանավոր, նամակով, գրությամբ, կապի այլ միջոցներով, անմիջական կամ միջնորդավորված եղանակով՝ երրորդ անձանց միջոցով: Դրա արտահայտման ձևը արարքի որակման տեսանկյունից որևէ իրավական նշանակություն չունի: Սպառնալիքի գնահատման տեսանկյունից արժևորվում է սպառնալիքի կոնկրետությունը և իրական լինելը: Տվյալ դեպքում կոնկրետությունը ենթադրում է այն հանգամանքի հստակեցում, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը՝ սպանել, առողջությանը ծանր վնաս պատճառել, թե խոշոր չափի գույքային վնաս հասցնել: Ընդ որում սպառնալիքի իրականացման եղանակների մասին հայտարարելը արարքի որակման համար նույնպես նշանակություն չունի:

Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Հատկանշական է այն հանգամանքը, որ թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն ածանցյալ նշանակություն ունի: Առաջնային օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Հնարավոր են դեպքեր, երբ օբյեկտիվ իրադրությունը հիմք չի տալիս սպառնալիքն իրական գնահատելու համար, սակայն անձն իր հոգեկան լարված վիճակի, հոգեկան առանձնահատկությունների կամ այլ պատճառներով իրականությունը խեղաթյուրված է ընկալում՝ կարծելով, թե սպառնալիքն իրական է: Օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, սպառնալիք տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանցավորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ պահանջը և սպառնալիքը հարկադրանքի, այսինքն՝ տուժողի կամքի հաղթահարման միակ ուղիները չեն: Հարկադրանքը իրականում կարող է արտահայտվել այլ՝ ավելի մեղմ եղանակներով: Ուստի տուժողի կամքի վրա ներազդումը հնարավոր է հարկադրանքի այնպիսի եղանակներով, որոնք ուղղակի չարտահայտվեն սպառնալիքով ամրապնդված պահանջով:

Այս առումով շորթման հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների սպառնիչ թվարկումը անհարկի նեղացնում է դրա կիրառման շրջանակը: Ինչպես ար-

դեն նշվեց, քիչ չեն իրավիճակները, երբ հանցավորը իր պահանջը ներկայացնում է այլ ձևով, քան նշված է հանցակազմի դիսպոզիցիայում, ինչի հետևանքով էլ վերջինիս արարքը դուրս է մնում քննարկվող հոդվածի կարգավորման տիրույթից:

Մասնավորապես՝ եթե գույքի, գույքային իրավունքի փոխանցման կամ գույքային բնույթի այլ գործողությունների կատարման պահանջը եղել է, սակայն սպառնալիք, որպես այդպիսին, չի եղել, կամ այն կրել է այլ բնույթ, քան նշված է հոդվածի դիսպոզիցիայում, նշանակում է, որ անձի արարքը քննարկվող հանցակազմով չի կարող որակվել, քանի որ բացակայում է հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից մեկը:

Շորթոդները, որպես կանոն, իրենց պոտենցիալ տուժողների հետ վերաբերում են չափազանց քաղաքավարի և իրենց գործողություններում անչափ գրագետ են: Քննարկենք մի քանի իրավիճակներ:

Իրավիճակ 1. «Ներեցեք խնդրում եմ, մենք իմացել ենք, որ դուք զբաղվում եք ձեռնարկատիրական գործունեությամբ, և քաղաքում բոլորը մեզ վճարում են, հաջորդ ամսից սկսած դուք ևս ամեն ամիս պետք է վճարեք 50.000 ՀՀ դրամի չափով գումար:»։ Ձեռնարկատերը, իմանալով, որ խոսում է հանցավոր խմբի անդամի հետ, համաձայնում է առաջադրված պահանջին: Ակներև է, որ քննարկված դեպքում հանցավորը որևէ սպառնալիքով չամրապնդեց իր պահանջը, սակայն թաքնված սպառնալիքի գիտակցումը տուժողին հարկադրեց կատարելու պահանջը:

Իրավիճակ 2. «Եթե մեզ չվճարես, ապա գալու են ուրիշները և նրանք այսպես չեն խոսելու»: Ձեռնարկատերը համաձայնում է վճարել՝ վախենալով հնարավոր վտանգից: Այս դեպքում ևս շորթոդների արարքը չի կարող որակվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածով:

Իրավիճակ 3. Ծննդատանը բուժքույրը սպառնում է փոխել նորածին երեխային՝ պահանջելով մորը վճարել որոշակի չափի գումար: Միաժամանակ նա խոստանում է երեխային փոխել՝ առանց վերջինիս որևէ վնաս պատճառելու, այլ ընդհակառակը՝ նրբորեն և խնամքով:

Ինչպես տեսնում ենք, քննարկված դեպքերում հանցավորը հարկադրանքի այլ միջոցներով կարողանում է հասնել տուժողի կամքի ճնշմանը և իր հանցավոր մտադրության իրականացմանը, սակայն նրա արարքում «դե յուրե» բացակայում է քննարկվող հանցակազմը:

Հաշվի առնելով, որ տուժողի կամքի վրա ներագդելու մեխանիզմները կարող են տարբեր լինել ու, գտնում ենք, որ սպառնալիքների տեսակների սպառնիչ թվարկումը 188-րդ հոդվածի դիսպոզիցիայում նպատակահարմար չէ: Անհրաժեշտ է ԼՂՀ քրեական օրենսգրքի դիսպոզիցիան ընդարձակել և «կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր բառերով՝ «կամ հարկադրանքի այլ եղանակներով»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., Խաչիկյան Հ., Ղազինյան Գ. և ուրիշներ: ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս (Երրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Եր., 2007, էջ 353-354:
2. Кочои С. Ответственность за корыстные преступления против собственности. М., 1998, стр.90-91:
3. Сафонов В. Организованное вымогательство (уголовно-правовой и

- криминологический аспекты): дис... канд. юрид. наук. СПб.: С.-Петербург. акад. МВД РФ, 1997, стр. 36:
4. Дворкин А., Чернова К. Квалификация вымогательства и сопряженных с ним преступлений // Законность, 1994, №12, стр. 9.
 5. Гаухман Л., Максимов С. Уголовная ответственность за преступления в сфере экономики. М., 1996, стр. 68:
 6. Тенчов Э. Квалификация преступлений против социалистической собственности. Иваново, 1981, стр. 55:
 7. Незнамова З. Преступления против собственности. М., 1997, стр. 98:
 8. Кочои С. Ответственность за корыстные преступления против собственности. Учебно-практическое пособие. Изд. 2-е, доп. и перераб. М., 2000, стр. 246:
 9. Прохоров Л., Прохорова М. Уголовное право. Учебник. М., 1999, стр. 356:
 10. Шевцов Ю. Уголовная ответственность за вымогательство: автореф. дис... канд. юрид. наук. Минск: Белорус. гос. ун-т, 1995, стр. 52:
 11. Векленко В. Квалификация хищений: Монография. Омск, 2001, стр. 109-110:
 12. http://www.pravo.vuzlib.su/book_z1539_page_3.html

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Շորթման հասկացության կատարելագործման որոշ հիմնահարցեր էրիկ Արզումանյան

Հոդվածում հեղինակի կողմից վերանայվել են շորթման սահմանման էական և կառուցվածքային բացթողումները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող քրեական օրենսգրքում: Քննարկման առարկա են դարձել շորթման հանցակազմի օբյեկտիվ կողմը, ինչպես նաև առարկային վերաբերող մի շարք խնդրահարույց հարցեր: Գոյություն ունեցող բացթողումների ուսումնասիրության արդյունքների հիման վրա հեղինակն առաջարկում է շորթման օրենսդրական բնորոշման սեփական տարբերակը, որը, նրա կարծիքով, ավելի հստակ է արտահայտում ուսումնասիրվող հանցակազմի էությունը: Հեղինակի կողմից հոդվածում ներկայացրած առաջարկություններն արժանապատվորեն կարող են հիմք հանդիսանալ ոչ միայն հետագա գիտական ուսումնասիրությունների, այլ նաև կարող են էական նշանակություն ունենալ հանրապետության քրեական օրենսդրության կատարելագործման համար:

РЕЗЮМЕ

Некоторые вопросы совершенствования понятия вымогательства Эрик Арзуманян

Ключевые слова: вымогательство, предмет вымогательства, объективная сторона вымогательства, требование, угроза, принуждение, насилие, право на свободное волеизъявление.

В статье автором рассмотрены сущностные и структурные недостатки определения вымогательства в действующем уголовном кодексе Нагорно-Карабахской Республики. Проанализированы объективные признаки состава вымогательства, а также некоторые вопросы, связанные с определением предмета данного преступления. На основе анализа существующих недостатков, автором предложен собственный вариант законодательного определения вымогательства, который, по его мнению, точнее выражает сущность

исследуемого деяния. Предложения, предлагаемые в представленной статье, достойны стать предметом дальнейшего научного анализа, а также могут сыграть значительную роль в дальнейшем совершенствовании уголовного законодательства страны.

SUMMARY
Some Issues of Improving the Definition of Extortion
Erik Arzumanyan

Key words: extortion, extortion subject, the objective side of extortion, demand, threat, compulsion, violence, free expression of will.

In the present article the author shows the essential and structural weaknesses of the current definition of extortion in the Criminal Code of the Republic of Nagorno-Karabakh. The article thoroughly analyzes the objective side of extortion, as well as certain issues related to the definition of the object of the offense at hand. Based on the analysis of revealed shortcomings the author offers his own version of the legislative definition of extortion which can express its nature in a more correct and complete way. The suggestions given in the present article are subject for the further scientific analysis and can also impact the effective development of the criminal legislation of the country.